Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 14 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանք գյուղի ջրամատակարարման ներքին ցանցի վերակառուցման հեղինակային հսկողություն» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Լաչինի շրջանի Բերձոր քաղաքի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի վերակառուցման 1-ին փուլի շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ էլեկտրատեխնիկական սարքավորումների ներմուծում» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գարեգին Ա կրթական կենտրոնի կառուցում», «Մկրտարանին կից տարածքի բարեկարգում», «Ճաղաշարերի և դարպասների պատրաստում և տեղադրում» և «Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի կահավորում» ծրագրերը.

«Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգում կազմակերպվող համերգային և անիմացիոն միջոցառում» ծրագիրը.

«Կազա» Շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Թալինի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնակի վերակառուցում» ծրագիրը.

«Վորլդ Վիժն Ինտերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Եղվարդ համայնքի միջնակարգ դպրոցի սանհանգույցների վերանորոգում», «Ապարանի Ռաֆիկ Եղիազարյանի անվան N 1 դպրոցի սանհանգույցների վերանորոգում», «Ապարանի տարածաշրջանի յոթ համայնքներում խաղասարքերի տեղադրում», «Ապարանի տարածաշրջանի յոթ համայնքներում շինանյութի տեղադրում» ծրագրերը և «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում իրականացվող ծրագիրը», որի նպատակն է բարելավել երեխաների և դեռահասների զարգացմանն ու դաստիարակությանը նպաստող պայմանները՝ Սյունիքի մարզի Սյունիք համայնքի մանկապարտեզը և Սրաշեն համայնքի խաղահրապարակը մանկական խաղալիքներով կահավորելու միջոցով:

Ռուսաց լեզվի աջակցման հայ-ռուսաստանյան բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի Եղիշե Չարենցի անվան թիվ 13 հիմնական դպրոցի վերանորոգում» ծրագիրը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: